

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**ՖՐԱՆԶԱՅԶԻՆԳԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԶԵՎԻՆ
ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇ ԶԱՐՑԵՐ**

Լիպարիտ ԴՐՄԵՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Հողվածում օտարերկրյա պետությունների օրենսդրության հետ համեմատական վերլուծություն անցկացնելու միջոցով ցույց են տրվում մեր երկրում ֆրանչայզինգի պայմանագիր կնքելու առանձնահատկությունները, օրենսդրական կանոնակարգման մոտեցումները, առաջարկվում են ծագող խնդիրները լուծելու տարբերակներ:

Ֆրանչայզինգային հարաբերություններ ձևավորելու վերաբերյալ համաձայնություն ձեռք բերելու ձևին՝ պայմանագրին, վերաբերող կանոնները տեղ են գտել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 970-րդ հոդվածում և առանձին գերատեսչական նորմատիվ ակտերում, որոնք կարգավորում են պայմանագիրը գրանցելու գործընթացը:

Ֆրանչայզինգի պայմանագիրը կնքվում է գրավոր: Պայմանագրի գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության: Այսպիսի պայմանագիրն առջինն է: Օրենքի նման պահանջը պայմանավորված է այն հանգամանքով, որ ֆրանչայզինգի պայմանագիրը կնքվում է միայն ձեռնարկատերերի միջև, որոնք պարտավոր են հաշվետու լինել իրենց գործողությունների համար: Պայմանագրի գրավոր ձևի մասին ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ամրագրված դրույթները ենթադրում են, որ այն պետք է կնքվի բացառապես մեկ փաստաթուղթ կազմելու ու ստորագրելու միջոցով, և բացառվում է պայմանագրի գրավոր ձևին հավասարեցվող այլ պայմա-

նագրի կնքումը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի 4-րդ կետ և 454-րդ հոդվածի 3-րդ կետ): Գործնականում իրոք բացակայում է կողմերի միջև պայմանագրային հարաբերություններ հաստատելու նման ձևը, և բոլոր դեպքերում կողմերի միջև պահպանվում է պայմանագրի գրավոր ձևը: Նշված հանգամանքը պայմանավորված է նրանով, որ, բացի գրավոր ձևից, պահանջվում է պայմանագրի գրանցում, և այս պարագայում ևս դժվար է պատկերացնել մեկ փաստաթուղթ ներկայացնելու փոխարեն պայմանագրի կողմերի միջև առկա գրագրությունը պետական լիազորված մարմին ներկայացնելը՝ ի հավաստումն պայմանագրի կնքված լինելու²:

Ֆրանչայզինգի պայմանագրի պարագայում դրա գրավոր ձևը չպահպանելը ևս ունի որոշակի առանձնահատկություն: Այսպես՝ ընդհանուր կանոնի համաձայն՝ պայմանագրի հասարակ գրավոր ձևը չպահպանելը կողմերին որպես հետևանք զրկում է ի հավաստումն պայմանագրի կնքման վկաների ցուցմունքները վկայակոչելու հնարավորությունից: Այսինքն՝ կողմերը վեճ առաջանալու պարագայում զրկված չեն այլ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով հավաստել պայմանագիրը կնքված լինելու փաստը: Եվ միայն օրենքով սահմանված կամ կողմերի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է պայմանագրի առջնություն: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 970-րդ հոդվածն ամրագրում է, որ պայմանագրի գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության, և նման պայմանագիրն առջինն է: Կարծում ենք, որ մեկ փաստա-

թուղթ ստորագրելու միջոցով պայմանագիրը կնքելու վերաբերյալ վերը արտահայտված տեսակետի համատեքստում դիտելով դրա առջնչության հարցը՝ պետք է արձանագրել, որ նման խնդիր գրեթե բացակայում է, ինչը պայմանավորված է հարաբերության առանձնահատկությամբ. մասնավորապես՝ գործնականում դժվար է պատկերացնել իրավիճակ, երբ բարձր արդյունավետություն ունեցող բիզնեսի իրավատերը պայմանագրային հարաբերությունների մեջ մտնի օգտագործողի հետ առանց գրավոր փաստաթուղթ ստորագրելու, մասնավորապես խոսքը ֆրանչայզինգային ցանցի մասին է: Հետևաբար բացակայում է պայմանագրի առջնչությունը: Պայմանագրի գրավոր ձևի չպահպանման դեպքում այն անշուշտ չի էլ կարող գրանցվել պետական լիազոր մարմնում: Ինչպես տեսնում ենք, օրենսդրական կարգավորումն այնպիսին է, որ կողմերին պարտադրում է պայմանագիր կնքելու գրավոր ձևով: Ինչպես կնշվի ստորև, պայմանագիրը առջին համարելը չի սահմանափակվում միայն հասարակ գրավոր ձևով կնքելու պայմանը չպահպանելով: Այսպես՝ կախված նրանից, թե մտավոր սեփականության իրավունքի ինչ օբյեկտի նկատմամբ են իրավունքներ փոխանցվում, օրենքը պայմանավորում է պայմանագրի առջնչությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքը նախատեսում է ֆրանչայզինգի պայմանագրի պարտադիր գրանցում: Ֆրանչայզինգի պայմանագիրը գրանցում է պայմանագրով որպես իրավատեր հանդես եկող իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը գրանցած պետական մարմինը: Եթե իրավատերը գրանցված է օտարերկրյա պետությունում, ապա պայմանագիրը գրանցում է օգտագործողին գրանցած պետական մարմինը: Նման գրանցման անհրաժեշտությունը այն է, որ պայմանագրով իր բացառիկ իրավունքները փոխանցելով այլ անձի՝ իրավատերն ինչ-որ առումով սահմանափակում է նաև իր իրավունքները:

Այս սահմանափակումն էլ պետք է հայտնի դառնա հանրությանը, որն էլ հնարավոր է պետական գրանցմամբ: Պայմանագրի կողմերը երրորդ անձանց հետ հարաբերություններում իրավունք ունեն պայմանագիրը վկայակոչել միայն այն գրանցելուց հետո⁶: Իսկ միմյանց միջև հարաբերություններում պայմանագիրը գործում է կնքելու պահից⁶:

Այն դեպքում, երբ ֆրանչայզինգի պայմանագրով փոխանցվում են նաև արտոնագրային իրավունքի օբյեկտներ⁶, ապա պայմանագիրը ենթակա է գրանցման նաև արտոնագրերի և ապրանքային նշանների գրանցում իրականացնող լիազորված պետական մարմնում՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության առանձնացված ստորաբաժանումը հանդիսացող ՀՀ մտավոր սեփականության գործակալությունում (այսուհետ՝ Գործակալությունում)⁷: Այդ պահանջը չպահպանելու դեպքում ֆրանչայզինգի պայմանագիրը դարձյալ համարվում է առոչինչ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 970-րդ հոդվածի 3-րդ կետի բովանդակությունից ուղղակի հետևում է, որ ֆրանչայզինգի պայմանագիրը Գործակալությունում ենթակա է գրանցման միայն այն դեպքում, երբ օգտագործման են տրամադրվում արտոնագրային օրենսդրությամբ պահպանվող օբյեկտներ: Կարծում ենք, որ սույն հոդվածը պետք է մեկնաբանվի՝ հաշվի առնելով «Ապրանքային նշանների մասին» օրենքի 27-րդ հոդվածը, որի համաձայն՝ ապրանքային նշանը զիջելու և լիցենզային պայմանագրերը ենթակա են գրանցման Գործակալությունում: Այսինքն՝ ֆրանչայզինգի պայմանագիրը Գործակալությունում գրանցվում է ինչպես արտոնագրային օրենսդրությամբ պահպանվող օբյեկտը, սելեկցիոն նվաճումները, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաները, այնպես էլ ապրանքային նշանը օգտագործման տրամադրելու դեպքում: Մեր երկրում պայմանագրի գրանցումը մանրամասնորեն կարգավորվում է ՀՀ առևտրի և տնտեսա-

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ

կան զարգացման նախարարի՝ 2005 թ. մարտի 10-ի N49-Ն հրամանով (այսուհետ՝ Յրաման): Վերջինս վերաբերում է ապրանքային նշանները զիջելու մասին պայմանագրերի, լիցենզային պայմանագրերը գրանցելու կարգին: Յրամանով են կարգավորվում ապրանքային նշանները զիջելու ու լիցենզային պայմանագրերը, այդ թվում՝ ֆրանչայզինգի պայմանագիրը, ինչպես նաև առանց գրանցման պահպանվող ապրանքային նշանների լիցենզիաների փոխանցմանը վերաբերող պայմանագրերը գրանցելու հետ կապված հարաբերությունները: Յետաքրքիր է այն հանգամանքը, որ օրենսդրությունը նախատեսում է արտոնագրային իրավունքի օբյեկտի, սելեկցիոն նվաճման, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիայի օգտագործման իրավունքի տրամադրումը լիցենզային պայմանագրի միջոցով, որը ևս պետք է գրանցվի Գործակալությունում: Նույն կանոն է գործում նաև ապրանքային նշանի վերաբերյալ: Այստեղ հարց է ծագում, թե արդյոք կարող է պայմանագիրը գրանցելու անհրաժեշտություն առաջանալ նաև երրորդ անգամ՝ լիցենզիան տրամադրելու համար: Կարծում ենք՝ պետք է համաձայնել Գ. Ե. Ավիլովի այն կարծիքին, որ ֆրանչայզինգի պայմանագիրը գրանցելու դեպքում Գործակալություն պետք է դիմել ընդամենը մեկ անգամ՝ գրանցելու ֆրանչայզինգի պայմանագիրը, որը ներառում է արտոնագրային իրավունքի օբյեկտների և ապրանքային նշանի փոխանցումը⁹: Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 973-րդ հոդվածով սահմանված այն պահանջին, որով իրավատերը կրում է լիցենզիաները օգտագործողին հանձնելու և սահմանված կարգով դրանց ձևակերպումն ապահովելու պարտականությունը, ապա գտնում ենք, որ նշված դրույթը չպետք է մեկնաբանվի առանձին՝ մեկնաբանման այսպես կոչված ինտերնալ մեթո-

դի օգտագործմամբ: Նշված դրույթը փաստորեն հենց 969-րդ հոդվածի տրամաբանական շարունակությունն է և ենթադրում է լիցենզիայի փոխանցում հենց ֆրանչայզինգի պայմանագրի հիման վրա, այլ ոչ թե առանձին կնքված լիցենզային պայմանագրով: Հակառակ դեպքում զուտ տեխնիկական տեսանկյունից բարդանում է պայմանագրի կնքումը, ինչն ինքնին դժվարացնում է հարաբերության ձևավորումը: Չնայած վերոնշյալ հանգամանքի առկայությանը՝ արևմտյան տարբեր աղբյուրներում նշվում է հենց լիցենզային պայմանագրերի կնքման մասին¹⁰: Կարծում ենք, որ մեկ փաստաթղթի տեսքով կազմվող պայմանագրի տեքստում լրիվությամբ հնարավոր է նախատեսել համապատասխան լիցենզիաների փոխանցման վերաբերյալ դրույթներ, ինչն առավել նպատակահարմար է իրագործման տեսանկյունից, չի պահանջում լրացուցիչ թղթաբանություն, և գրանցման է ենթակա միայն մեկ պայմանագիր:

Եվ այսպիսով, ինչպիսի՞ն է հարաբերակցությունը պայմանագրի երկու գրանցումների միջև: Գոյություն ունի տեսակետ, ըստ որի՝ քանի որ առանց Գործակալությունում գրանցված լիցենզիային պայմանագիրը առջինն է, հետևաբար չի կարող նախօրոք գրանցված լիցենզիային իրավաբանական անձին գրանցած մարմնում¹⁰: Գտնում ենք, որ, այնուամենայնիվ, առաջնային պետք է համարել իրավաբանական անձին գրանցած մարմնում կատարած առաջին գրանցումը, քանի որ առանց դրա կողմերը չեն կարող հենվել պայմանագրի վրա, հետևաբար դիմել նաև Գործակալություն:

Ինչպես վերը նշվեց, ֆրանչայզինգի էությունից չի բխում միայն մեկ իրավունքի փոխանցումը: Միջազգային պրակտիկան վկայում է, որ միշտ փոխանցվում է «իրավունքների համալիրը», այդ թվում և՛ ապրանքային նշանի օգտագործման իրավունքը: Ստացվում է, որ պայմանագիրը գրեթե միշտ ենթակա է Գործակալությունում գրանցման: Համեմատության համար

նշենք, որ հետխորհրդային մի շարք պետությունների քաղաքացիական օրենսդրությամբ ֆրանչայզինգի պայմանագրի կրկնակի գրանցում չի պահանջվում: Այդ երկրների մի մասում պահանջվում է կամ պայմանագիրը կնքել գրավոր¹¹, կամ, ի հավելումն դրա, այն գրանցել նաև համապատասխան իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը գրանցած մարմնում¹² կամ արտոնագրային գերատեսչությունում¹³: Փաստորեն, պայմանագրի ձևի որևէ տարբերություն կապված ապրանքային նշանի կամ արտոնագրային օրենսդրությամբ պահպանվող օբյեկտի օգտագործման հանձնելու հետ, վերոնշյալ երկրների օրենսդրությամբ չի նախատեսվում: Կարծում ենք, որ պայմանագրի գրանցումը միայն Գործակալությունում բավարար է, և անհրաժեշտ չէ այն նախապես գրանցել իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրում: Մանավանդ, ինչպես վերը նշվեց, ֆրանչայզինգային հարաբերություններում մեծ մասամբ փոխանցվում են այնպիսի իրավունքներ, որոնց առկայության դեպքում պայմանագիրը գրեթե միշտ ենթակա է գրանցման Գործակալությունում: Լրացուցիչ գրանցումը անհարկի բարդություններ է ստեղծում կողմերի համար և որոշ չափով խոչընդոտում հարաբերությունների զարգացումը: Հաշվի առնելով այն, որ ֆրանչայզինգի պայմանագիրն իր բնույթով ձեռնարկատիրական է¹⁴, կարծում ենք, որ գործարքի կրկնակի գրանցման պահանջը ֆորմալիզմի¹⁵ դրսևորում է, և նման մոտեցումը որևէ կերպ չի նպաստում ֆրանչայզինգային հարաբերությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Պայմանագրի գրանցումը կատարում է որոշակի գործառույթ. այն ոչ միայն միտված է իրազեկելու սպառողներին այս կամ այն ընկերության՝ ֆրանչայզինգի պայմանագրի հիման վրա գործելու մասին, այլև նպատակ ունի ամբողջական տեղեկատվություն ապահովելու կոնկրետ տարածքում գործող ֆրանչայզինգային ցանցերի

վերաբերյալ: Գրանցման ընթացակարգ նախատեսված է ոչ միայն Հայաստանի օրենսդրությամբ: Մեր երկրում գործող ընթացակարգի նման է գրանցվում պայմանագիրը նաև Ռուսաստանի Դաշնությունում: Մինչդեռ ԱՄՆ-ում և Իսպանիայում այն ունի այլ բնույթ: Այսպես՝ ԱՄՆ-ում բացկայում է գրանցման միասնական ընթացակարգ դաշնային մակարդակով: Այդ ընթացակարգերը նախատեսվում են առանձին նահանգների իրավական ակտերով¹⁶: Ընդ որում՝ խոսքը չի վերաբերում պայմանագրի գրանցմանը: Պարտադիր գրանցում են անցնում իրավատերերը, որպիսի փաստը յուրօրինակ թույլտվություն է ֆրանչայզինգով զբաղվելու համար: Այլ կերպ ասած՝ իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը գրանցվելու պահից ձեռք է բերում որոշակի կարգավիճակ, որով էլ պայմանավորված՝ դառնում է ֆրանչայզինգային հարաբերության մեջ մտնելու ունակ սուբյեկտ:

Նույնպիսի մոտեցում է ցուցաբերված նաև գրանցման իսպանական մոդելում: Այս դեպքում էլ գրանցման են ենթակա այն անձինք, ովքեր կնքելու են ֆրանչայզինգի պայմանագիր: Բացի այդ՝ վարվում է ֆրանչայզերների առանձին ռեեստր: Մանրածախ առևտրի մասին Իսպանիայի օրենքի 62-րդ հոդվածի համաձայն՝ Իսպանիայի տարածքում գործունեություն իրականացնող բոլոր ֆրանչայզերները ենթակա են գրանցման. օտարերկրյա ֆրանչայզերները՝ դաշնային ռեեստրում, ազգային (ռեզիդենտ) ֆրանչայզերները՝ շրջանային ռեեստրում: Ֆրանչայզինգի ռեեստրը իրականացնում է երկու կարևոր գործառույթ. նախ և առաջ այն յուրօրինակ վերլուծական կենտրոն է երկրում գործող ֆրանչայզինգային ցանցերի և ընդհանրապես ֆրանչայզինգային գործունեության վերաբերյալ: Երկրորդ՝ նման ռեեստրը նախապայմանագրային փուլում երաշխիք է ստեղծում օգտագործողին տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ¹⁷:

Արևմտյան երկրների փորձը գրանցման

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵ

ընթացակարգի վերաբերյալ անշուշտ ուսանելի է: Ֆրանչայզերների ռեեստրը առավել արդյունավետ տեղեկատվական ռեսուրս է, քան կոնկրետ պայմանագրերի վերաբերյալ որոշակի պետական մարմնում կուտակված տեղեկատվությունը: Ընդ որում, վերջին դեպքում բացահայտման ենթակա տեղեկատվությունը շատ սահմանափակ է, և հնարավոր է լինում ստանալ տեղեկատվություն միայն պայմանագրի կողմերի (անվանումների) վերաբերյալ: Մինչդեռ, վերոնշյալ երկրներում ռեեստրում գրանցվելը պահանջում է որոշակի տեղեկատվության տրամադրում, որի պարագայում միայն ֆրանչայզերը կարող է ստանալ համապատասխան գրանցումը: Իսկ այդ տեղեկատվությունը մատչելի է հնարավոր օգտագործողների համար¹⁸:

Պայմանագիրը գրանցելու պարտականությունը, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, դրվում է իրավատիրոջ վրա: Այնուամենայնիվ, նման նորմը դիսպոզիտիվ բնույթ ունի և կողմերի համաձայնությամբ կարող է փոփոխվել: Այդպիսի պարտականություն կարող է դրվել, ասենք, օգտագործողի կամ ցանկացած երրորդ անձի վրա¹⁹:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ մի հանգամանքի, որը դուրս է մնացել օրենսդրական կարգավորման ոլորտից: Խոսքը վերաբերում է պայմանագրի գրանցման ժամկետին: Ո՛չ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը, ո՛չ վերը հիշատակված Հրամանը և ո՛չ էլ որևէ այլ իրավական ակտ չեն սահմանում ժամկետ, որի ընթացքում պետք է կատարվի պայմանագրի գրանցումը: Պայմանագրի գրանցման համար անհրաժեշտ ժամկետի բացակայությունը ֆրանչայզինգային հարաբերությունների սուբյեկտներին հնարավորություն է ընձեռում խուսափելու պայմանագիրը համապատասխան մարմիններում գրանցելուց: Ընդ որում՝ պայմանագիրը չգրանցելու դեպքում պայմանագիր կողմե-

րը զրկվում են միայն երրորդ անձանց հետ հարաբերություններում պայմանագիրը վկայակոչելուց (խոսքը վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 970-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված գրանցմանը): Ստացվում է, որ չգրանցված պայմանագրի առկայության պարագայում իսկ կողմերը կարող են մտնել ֆրանչայզինգային հարաբերությունների մեջ և զբաղվել համապատասխան ձեռնարկատիրական գործունեությամբ, սակայն այդ փաստը (պայմանագրի կնքումը) հայտնի չլինի երրորդ կողմին, օրինակ՝ սպառողներին: Խնդիրն ավելի է խորանում այն դեպքում, երբ ծագում է կողմերից մեկի պատասխանատվության հարցը: Ինչպես վերը նշվեց, պայմանագիրը գրանցելու նպատակն այն է, որ սպառողները տեղեկացված լինեն համապատասխան սահմանափակումների, ինչպես նաև այն մասին, որ իրենց կոնտրագենտը ոչ թե իրավատեր, այլ օգտագործող կազմակերպությունն է: Այլ կերպ ասած՝ պայմանագիրը գրանցելու ժամկետի բացակայության պայմանում պայմանագիր կողմերը անորոշ ժամանակահատվածում կարող են զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, որի պատճառով, փաստորեն, խախտվում է սպառողի իրավունքն այնքանով, որքանով որ նա տեղյակ չէ՝ ինքը գործ ունի իրական «բրենդի»²⁰ (իրավատեր կազմակերպության), թե՞ այն օգտագործողի հետ:

Եիշտ է, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 970-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետի դրույթներն անուղղակի ձևով պարտադիր են դարձնում պայմանագրի գրանցումը, սակայն չեն կարգավորում գրանցման ժամկետին վերաբերող հարցը, որը պակաս կարևոր չէ: Այդ իսկ պատճառով էլ կարելի է օրենսդրորեն նախատեսել կոնկրետ ժամանակահատված, որի ընթացքում պետք է իրականացվի պայմանագրի գրանցումը կամ ամրագրել դրույթ, ըստ որի՝ կողմերն իրենք են որոշում պայմանագիրը գրանցելու համար անհրաժեշտ ժամանակահատվածը՝ դարձյալ նշելով սահ-

մանային այն ժամկետը, որում պետք է ներառվի կողմերի համաձայնեցրած ժամկետը: Ուստի կարծում ենք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 970-րդ հոդվածը կարելի է լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«Համալիր թույլտվության պայմանագրի գրանցումը պետք է իրականացվի պայմանագիրը կնքելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

Այն դեպքում, երբ համալիր թույլտվության պայմանագրով տրամադրվում է արտոնագրային օրենսդրությամբ պահպանվող օբյեկտի օգտագործման իրավունքը, ապա պայմանագիրը պետք է գրանցվի արտոնագրերի և ապրանքային նշանների գրանցում իրականացնող լիազորված պետական մարմնում սույն մասի առաջին պարբերությունում նշված ժամկետի ավարտից հետո՝ մեկամսյա ժամկետում:

Համալիր թույլտվության պայմանագրով կողմերը կարող են նախատեսել ժամանակահատված, որի ընթացքում պետք է

կատարվեն պայմանագրի գրանցումները: Բոլոր դեպքերում այդ ժամանակահատվածը չի կարող գերազանցել վեց ամիսը պայմանագիրը կնքելու պահից»:

Այդուհանդերձ, պայմանագրի գրանցման համար անհրաժեշտ ժամկետի՝ օրենսդրական ամրագրման բացակայությունը կողմերին չի զրկում պայմանագրով համապատասխան ժամկետ նախատեսելու իրավունքից:

Ֆրանչայզինգի պայմանագիրը կարող է կնքվել ինչպես որոշակի ժամկետով, այնպես էլ առանց ժամկետի նշման: Ժամկետը որոշվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 326-րդ հոդվածով սահմանված կարգով: Անորոշ ժամկետով կնքված պայմանագրի դեպքում կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագրից՝ այդ մասին վեց ամիս առաջ մյուս կողմին տեղեկացնելով, եթե ավելի երկար ժամկետ պայմանագրով նախատեսված չէ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 979-րդ հոդված):

¹ Стен Гражданское право. Учебник. Том 2. Под ред. А. П. Сергеева, Ю. К. Толстого. Проспект. М. 2005, էջ 787:

² Стен Брагинский М. И., Витрянский В. В. Договорное право. Книга третья: Договоры о выполнении работ и оказании услуг. М., 2002 (www.pravoznavec.com.ua/books/242/41/#chlist):

³ Стен ՀՀ քաղաքացիական օրենսգրք, ՀՀՊՏ 1998.08.10/17(50), հոդվածներ 298, 303:

⁴ Եթե օրենսդրական նման ձևակերպումը համադրենք այն մոտեցմանը, ըստ որի՝ օգտագործող պարտավոր է սպառողների համար առավել ակնառու եղևակով տեղեկացնել, որ ինքն իրավատիրոջ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը կամ մտավոր սեփականության այլ օբյեկտ օգտագործում է ֆրանչայզինգի պայմանագրի հիման վրա, ապա առաջանում է հակասություն: Չէ՞ որ պայմանագիրը կնքելուց հետո, անկախ վերջինիս գրանցման փաստից, այն գործում է կողմերի միջև, իսկ օգտագործողը այդ պայմանագրի

հիման վրա կարող է ծավալել գործունեություն: Նման գործունեությունն էլ, լինելով ձեռնարկատիրական, իրականացվում է երրորդ անձանց հետ որոշակի հարաբերությունների մեջ մտնելու միջոցով (ժառայությունների մատուցում, ապրանքների վաճառք, աշխատանքների կատարում): Այդ դեպքում ինչպես կարող է օգտագործողը գործել պայմանագրի հիման վրա՝ միաժամանակ այդ մասին չվկայակոչելով երրորդ անձանց հետ հարաբերություններում, այսինքն՝ չկատարելով օրենքով սահմանված պարտականությունը (Стен Брагинский М. И. Витрянский В. В., նշված աշխատությունը (www.pravoznavec.com.ua/books/242/41/#chlist)): Համաձայնելով Բրազինսկու մոտեցմանը՝ կարծում ենք, որ «երրորդ կողմի հետ հարաբերությունում բացառապես պայմանագրի գրացված լինելու պարագայում հենվելու» պայմանը ավելորդ է, և այս դեպքում նախընտրելի է ամրագրել, որ պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն գրանցելու պահից:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- ⁵ Տե՛ս Трахтенгерц Л. А. Комментарии к гражданскому кодексу РФ, части второй. Отв. ред. Садииков О. Н. Институт законодательства и сравнительного правоведения при правительстве РФ., М., 2005:
- ⁶ Տե՛ս Տ.Կ. Բարսեղյան և ուրիշներ, ՀՀ քաղաքացիական իրավունք, դասագիրք, 3-րդ մաս, Երևան, 2003, 93-95-րդ էջեր:
- ⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 110:
- ⁸ Տե՛ս Гражданское право. Часть 2. Обязательственное право. Учебник. Под ред. В. В. Залесского. М., 1998, էջ 578:
- ⁹ Տե՛ս Стивен Спинелли-мл., Роберт М. Розенберг, Сью Берли. Франчайзинг: путь к богатству. М., Вильямс, 2007, էջ 131, Ян Мюррей, Франчайзинг. Питер. 2004, էջ 94:
- ¹⁰ Տե՛ս Гражданское право. Часть 2. Обязательственное право. Учебник. Под ред. В. В. Залесского. М. 1998, էջ 579:
- ¹¹ Տե՛ս օրինակ՝ ГК РМ. Мониторул Офичал ал Р. Молдова N 82-86/661 от 22.06.2002. Статья 1172, The Civil Code of Georgia. 2001 by IRIS Georgia. Article 611, ГК Республики Туркменистан /www.cis-legal-reform.org/civil-code/tajikistan/ civ-taj-2-rus.htm:
- ¹² Տե՛ս օրինակ՝ ГК республики Узбекистан. Олий Мажлиса Республики Узбекистан N 257-І от 29.08.96г:
- ¹³ Տե՛ս օրինակ՝ ГК Кыргызской Республики. Редакция законов КР от 5 января 1998 года. N1:
- ¹⁴ Տե՛ս Բարսեղյան Տ.Կ., Գործարարական իրավունք, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2007, 223-224-րդ էջեր:
- ¹⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 11:
- ¹⁶ Տե՛ս Donald D. Boroian, Patrick J. Boroian. The franchise advantage: make it work for you. A Francorp Publication, USA, էջ 77, Donald D. Boroian, L. Patrick Callaway. Franchising your business. A Francorp Publication, USA, էջ 123-124:
- ¹⁷ Տե՛ս Багдасарян А. Ф. Гражданско-правовые проблемы заключения договора коммерческой концессии (франчайзинга). Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2008, էջ 15:
- ¹⁸ Տե՛ս Багдасарян А.Ф., նշված աշխատությունը, էջ 16:
- ¹⁹ Տե՛ս А. П. Сергеев, Ю. К. Толстой, նշված աշխատությունը, էջ 739:
- ²⁰ Բրենդ տերմինը կիրառված է համընդհանուր ճանաչում ստացած ֆիրմային անվանում, ապրանքային կամ սպասարկման նշան իմաստով:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ О ФОРМЕ ДОГОВОРА ФРАНЧАЙЗИНГА

Липарит ДРМЕЯН

*Аспирант кафедры гражданского права
Юридического факультета ЕГУ*

В рамках представленной статьи изучаются разные вопросы касающиеся форме договора франчайзинга. В частности, в статье способом сравнительного анализа

законодательства зарубежных стран показаны специфические черты формы заключения договора, подход законодательного регулирования, обсуждается порядок регистрации договора.

Автором предлагаются варианты решения ряда проблем возникший как во время заключения договора, так и регистрации договора.
